

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/6

13 հունվարի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ստեփան Ասլանյանի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 14.10.2014 թ-ի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 1224 որոշման դեմ:

Ա/Ձ Ստեփան Ասլանյանի գանգատում բերված փաստարկները.

Փոստային ծառայության միջոցով ստացվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 14.10.2014թ. թիվ 1224 հարկադիր գանձման որոշումը՝ ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին:

Ըստ որոշման, չվճարված հարկային պարտավորությունները ներառում են 2009թ. դեկտեմբերից մինչև 2010թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածը, հաստատագրված վճարի և սոցիալական ապահովության վճարների գծով առկա պարտավորություններին:

Հաստատագրված վճարի գծով 146.840 դրամ պարտավորությանը, ապա որոշակիորեն պարզ է դրա առաջացման հիմքերը, քանի որ գանգատաբերի կողմից հաստատագրված վճարների ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ վերջին հայտարարությունը ներկայացվել է 2010թ. հունվարից-հունիս ամիսների համար: Հաստատագրված վճարի գծով պարտավորությունները չեն վճարվել ժամանակին ֆինանսական դժվարությունների և գործունեություն չիրականացնելու պատճառով:

Ինչ վերաբերվում է սոցիալական վճարի գծով ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 14.10.2014թ. թիվ 1224 հարկադիր գանձման որոշմամբ առաջադրված 286.164 դրամ պարտավորությունը, ապա գանգատաբերը փորձել է հաշվել այն որոշման մեջ նշված 2009թ. դեկտեմբերից մինչև 2010թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար, սակայն իրեն չի հաջողվել ստանալ նշված գումարը: Մասնավորապես, 2009թ. դեկտեմբերի համար 5000 դրամ, 2010թ. հունվարից-դեկտեմբեր ամիսների համար՝ 60.000 դրամ, ընդամենը՝ 65.000 դրամ: Անհասկանալի է, թե որտեղից է հաշվարկվել 184.920 դրամի ապառքը և տույժի գումարները: Անհասկանալի է նաև, թե ինչու պարտավորությունները հաշվարկվել են 2010թ. հունվարից մինչև դեկտեմբեր, այլ ոչ թե 2010թ. հունվարից մինչև հունիս ամիսների համար, քանի որ հուլիսից գանգատաբերն ընդհանրապես որպես անհատ ձեռնարկատեր գործունեություն չի իրականացրել:

Գանգատաբերը հայտնում է, որ գործունեություն չի իրականացնում, չի ստանում եկամուտներ, հետևապես հնարավորություն չունի վճարել հաշվարկված սոցիալական վճարները՝ տույժերով հանդերձ:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերահաշվարկել հարկային պարտավորությունները՝ հնարավորություն տալով աստիճանաբար մարելու:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Ստեփան Ասլանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 09.10.2014 թ-ի դրությամբ վերջինիս չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 433.004 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 14.10.2014 թ-ին ընդունվել է թիվ 1224 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Ստեփան Ասլանյանից 433.004 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Որոշման համաձայն հաստատագրված վճարի գծով պարտավորությունը կազմում է 146.840 դրամ, այդ թվում՝ ապառք 92.900 դրամ, տույժ 53.940 դրամ, որն առաջացել է 2009թ.-ի դեկտեմբերից մինչև 2010թ.-ի հունիս ամիսների ներկայացված ելակետային տվյալներից և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերից:

Սոցիալական վճարի գծով պարտավորությունը կազմում է 286.164 դրամ, այդ թվում՝ ապառք 184.920 դրամ, տույժ 101.244 դրամ, որն առաջացել է 2009թ.-ի դեկտեմբերից մինչև 2010թ.-ի դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված կանխավճարներից և նույն ժամանակահատվածում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերից:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշման մեջ սոցիալական ապահովության վճարների առաջացման ժամանակահատվածը սխալ է նշված: Մասնավորապես, Որոշման մեջ նշված է, որ սոցիալական ապահովության վճարներն առաջացել են 2009թ.-ի դեկտեմբերից մինչև 2010թ.-ի դեկտեմբերը հաշվարկված կանխավճարներից և նույն ժամանակահատվածում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերից: Սակայն իրականում սոցիալական ապահովության վճարներն առաջացել են 2009թ.-ի դեկտեմբերից մինչև 2012թ.-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի համաձայն. «1. Վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի:

2. Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 14.10.2014 թ-ի թիվ 1224 որոշումը, ըստ էության, կազմվել է վերոգրյալ իրավանորմների պահանջների խախտմամբ: Մասնավորապես, սոցիալական ապահովության վճարների գծով առաջադրված պարտավորությունը չէր կարող առաջանալ Որոշման մեջ նշված 2009թ.-ի դեկտեմբերից միջև 2010թ.-ի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումը ենթակա է չեղյալ համարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 14.10.2014 թ-ի հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 1224 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ-ին կայացնել նոր որոշում՝ Ա/2 Ստեփան Ասլանյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու մասին:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ